24 Հոկտ. 1880 ամի. Որովհետև Յարութիւն քահանայն Խաչերեսեանց Արմաւիր գեղջ Կուբանու նահանգի վարէ կեանս հակառակ իւրումն կոչման, ուստի ի սաստ և ի զգուշութիւն նմա հրամանագրել Կոնսիստորիային Աստրախանայ դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ զամիսս երիս և տալ ապաշխարել առ դրան եկեղեցւոյն առանց փիլոնի. իսկ յետ լրման ժամանակի ապաշխարանաց պարտաւորել զնա ձեռագրաւ հեռի կալ այսուհետև յանվայել ընթացից, ի հակառակ դէպս սպառնալով զենթարկումն ընդ առաւել սաստկագոյն պատժոյ։

15 Հոկտ. 1880 ամի. Ըստ նախընթաց հաճութեան Նորին Վեհափառութեան արձակել զԱրիստակէս վարդապետն Դաւթեան ի փոխանորդս և յանդամակցս պաշտօնէ Հոգ. Կառավարութեան Նոր—Նախիջևանայ ի 1էն հոկտ. տարւոյս և ի տեղի նորա ժամանակաւորապէս կարգել յանդամակցութիւն նոյն կառավարութեան զվանահայր սրբոյ Խաչի վանուց զՊետրոս վարդապետ Թողլով ի վերայ նորա և զվանահայրական պաշտօնն մինչ ցառանձին տնօրէնութիւն Սինոդիս։

17 Հոկտ. 1880 ամի. Որովհետև Յովհաննէս աւագ քահանայն Տփխիսոյ գիտակցաբար կատարեալ է զշնաս պսակ ի ծխոյ այլոյ քահանայի այնէ Աղէքսանդրի Արզութեանց ընդ Եղիսաբէթի Խիզանեանց, հրամայել դադարացուցանել զնա ի քահանայագործութենէ անորոշ ժամանակաւ, բառնալ ի նմանէ զպատիւ աւագ քահանայութեան վերադարձուցմամբ ի Սինոդս զվկայագիր այնորիկ և զպսակն զայն ըստ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ համարել անվաւէր։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅՑ.

Առաջիկայ Դեկտեմբեր ամսում «Արարատ» ամսագրոյս երկրորդ տասներորդ շրջանը լրանալով՝ 1881 թուականի Յունվարից պէտք Հորիզորդ տասներորդ (ԺԴ) շրջանն սկսի։

Ուստի կխնդրեմք մեր Գործակալներէն, որպէս զի փութան օր յառաջ ցՅունվար ամիս առաջակայ տարւոյ ծանուցանել Տպ. Ժողովոյն բաժանորդագրուիլ ցանկացողաց անուանքը ճիշդ հասցէներով։

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի Աղգայինք, ինչպէս մինչև ցարդ համակրած են Արարատ ամսագրոյս և իւրեանց խրախուսանքը չեն պակցած, նոյնպէս կփութան յառաջակայում և միշտ միևնոյն զգացմամբք բաժանորդագրուիլ և օգնել սմին։

Արարատի թերթից քանակութիւն, ուղղութիւնն և բովանդակութեանց ծրագիրը և տարեկան բաժանորդագին մի և նոյնը կմնան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։